

Ն Շ Խ Ա. Ր Ն Ե Ր .

ԿՈՐԱԴՐ ՈՒ ՄՊՈՒՅՑՈՒԱՄ ՀԱՅԵՐ.

(Տրապաֆոսի հայ-մահմտական գիւղըն և նրանց աւանդութիւնները) .

Ս Ե Խ Գ Ե Տ Ա Յ Ի Ք .

Համշէնի լեռներու արևմտեան երեսից հիւսիս կը հօսի Սև Գետ (Գարա—գերէ) ասուած մեծ և պատմական գետն։ Սորա հովտի ամբողջ տարածութիւնը Սև Գետ և ըստ ժողովուղի Սև Գետացիք կառուին, որ Համշէնցոց պէս հայերէն կը խօսին և 1708—10 թուականներուն թուրքացած են կրօնամոլ մզլաներու և ենիշ-չերիններու ձնշման ներքեւ։

Սև գետն քանի խնարհ իջնայ Համշէնի գետից կը հեռանայ, տակաւ առ տակաւ արևմտեան հիւսիս կուղղուի։

Սև Գետացիք կը գտնուին Տրապիզոնից ծովով 5—7 ժամ՝ յարեւելս եղած Սիրունէն գիւղաքաղաքին բարձրերը՝ Սիրունէն, որ ծովին կը բաղադր մի է, եամգոլու և Սև Գետի միջամայրը, ունի նաւաշանց զիստ գող և աւազակ բնակիչներ, որք և ջերմ մահմետականներ են հայէ և յունէ դարձած։

Այս Սև Գետացոց երկիրն անհուն անտառներով պատած է. հինաւուրց անտառներու խոտացած ծառներն արեգակն ճառագայթներն անթափանցիլ գործոցած են։

Եամգոլու գետն կոկոի Դաշ-քէօփիքի լեռներէն, Յ ժամ՝ իւր ընթացք շարունակելով լեռնահույտի մի մէջ գտնուած 1,000 տնուոր յունական գիւղի միջից կանցնի։

Սանթա կը կոչուի այս գիւղը՝ բնակիչները չունին ցանք, մեծ և փոքր որմնաշար են և քարագործ, որք լաւ կերպով կատարելագործած են իրենց արհեստը։ Սորա շարունակ պանդիստութեան կը գիմնին, չարքաշ կեանկ անցնելով դրամ կը շահին, իրենց հայրենիքը կը վերագառնան ի Սանթայ, ուր կը վայելն իրենց վասառակը։

Սանթա կը կոչուի այս գիւղը՝ բնակիչները չունին ցանք, մեծ և փոքր որմնաշար են և քարագործ, որք լաւ կերպով կատարելագործած են իրենց արհեստը։ Սորա շարունակ պանդիստութեան կը գիմնին, չարքաշ կեանկ անցնելով դրամ կը շահին, իրենց հայրենիքը կը վերագառնան ի Սանթայ, ուր կը վայելն իրենց վասառակը։

Սանթայից Խամգոլի ջրի հինալով՝ կը պատահինք Կորալի և Մեզրէ, յունական հովտախրաբուն, ասաի ևս՝ ժամից Ըղրիս թուրքացած հայ գիւղին կը հասնենք, որ թերեւս ժամանակաւ քաղաք եղած լինի, ուստի հայ գիւղացւոց մէջ գրնացիր Աղրիս քաղաք, գողցար օխուը հատ աւանք առաջի ու առաջի քաղաքաւանան ի Սանթայ, ուր կը վայելն իրենց վասառակը։

Սանթայից Խամգոլի ջրի հինալով՝ կը պատահինք Կորալի, Մեզրի, Սիմնայ, Վերին և ներքին Միսիսոր գիւղերու կը պատահինք։

Ներքին Միսիսոր գիւղից վայր այս ջուրը Խամգոլու կասուի։

Սև Գետացիներից 8 ժամ՝ արևմտեան հիւսիս Խամգոլու ջրի ձափի հովտի վերայ մերձ Սև ծովի անտառներու մէջ տարածուած, կան մի քանի գիւղօրայք, որք այս օր նիրկայացուցիչ են և մնացորդ Սև Գետի բաղադրինակ հայ ժաղովրդեան, որք այն սև օրէն

ի վեր քանի քանի սև օրերով իրենց հայութիւնը անարատ պահած են։

Արդէն վազուց՝ բնիքս ճանաչած օրէս, ջերմ վախաք ունէի այն սև հայերն՝ նոցա ներկայացուցիչ «Սևաւոր» հայերն տեսնել, հասու լինել իրենց անցեալ օրտաճմիկ անցքերուն։

Եյդ ինձ յաջողուեցաւ. աշակերտներէս մին՝ Վաղարշ Խոյեան (այժմ ի Տրապիզոն Վահան քահանայ, որ է առաջնորդական փոխանորդ) ուսուցիչ կարգուեցաւ այդ տեղ մնացած խումբ մի հայերուն։

Ուսուցիչ կողմէն հրամիրուեցայ աշակերտաց քննութեան, 76—77 թուականներուն յաջողութիւն չգտայ աշխատասէր ուսուցիչ ցանկութիւնը կատարելու, 1878 մայիս 23-ին ծովով 5 ժամ՝ յարեւելս ճանապարհորդեցինք, Գալկող կոչուած վարը գուբու կանք, բարձրացանք անտառապատ յեսներն ի վեր, հասանք Փիրզմէն գիւղի Դապլ, իջևսնեցինք Մարտիսոս Տափիեանի տունը, հայկական հիւրընկալութիւնն մի վայելեցինք։

Եյդ մենք կը գտնումն էր Տրապիզոնից 7—8 ժամ՝ յարեւելս և Սև գետացաց երկրին արևմտեան հիւսիսային ծայրին, որ Սև գետի կը պատկանի։

Գատրա թաղի հանդէսը (հիւսիս) կը տեսնուի Եւէմնու կամ Նվիմնոց գիւղին, սորա մօտ կայ ի հնուց մնացեալ հայկական եկեղեցինք, որ բարձրադիր Լասրա կոչուած վայրը հաստատուած է։

Եկեղեցեւոյ արևմտեան զառիվայրն, որ ընդարձակ զառիվայր մէկ, Վահանցիք կասուի, որ ամբողջ ծովին հայ թուրք լսակիչներէ բաղկացած է, ուր գեռ եօթ եկեղեցեւոյ հետքեր կանգուն կան։

Երկի օր Գատրա մնացի, փոքրիկ ժողովուրդն շուրջ միշտ պատած զառայ, աշակերտաց քընութիւնն միշտ կատարեցի, երկեմն միջոց զանելով Սև Գետի թուրքացած հայերուն վերայ մանաւոր տեղեկութիւններ քաղեցի, Աւսումնասիրութեան լնգարձակ ասպարէզ բացուեցաւ իմ առ ծնւ. այդ ասպարէզը մանելու համար մեծ ուժ պէտք էր, ասկայն տասն և հինգ տարիններէ ի վեր մեր յարգելիք Տրապիզոնից հայրենակիցներից անձկանօք կը պատսէի, գժբաղդարար մէկն երևան չեկաւ այդ ամնակարեսը վայրի վերայ դրույ, որպէս զի նկառագրի կայ այդ վայրին, ուր զետեղուած էին ըստաւոր թուրք հայ ժողովուրդ մի Բաղրամունեաց անկումից, յետց և հազարաւոր յիշատաներու ու աւանդութիւններ թողած՝ որ տակաւ առ տակաւ կորչելու վերայ են։

Հազար ափսոս մեր երիտասարդութեան, որ իրենց և ազգին պատիւ թերող դործերէ հետի գոնըն գափիկակեցաց կեանք անցնելու համար միայն ծնած են։

Սևնք էինք Փիրվանէի մէջ, Սև Գետ մեղնից 6—7 ժամ՝ յարեւելս և հարաւ յարեւելս տարածուած է, այս գետի երկու հովտներու բնակիչներն, որպէս վերև ասացինք, 1700 թուականներուն ամրողջովին հայ էին։

Համշէնի և Սև Գետ գաւառաց մէջ կան 16,000 համի հայեր, որք մոտած որջացած էին այնպիսի վայրեր, գաւառակներ, որոց յարաբերութիւնը արտաքին գաւառներու հետ խզուած էր, երկրի դրից բնական պատճառներից։

Եյս միջակին ենթարկուած էին նաև քանի յու-

1. Որպէս համշէնի գիւղօրայք մեծաւ մասամբ՝ նոյն պէս Այս գետի գնորէից անուններն հայերէն կը աշուին, նոյնպէս գնութեր եւ վայրեր իրենց հայ անունը պահած են։ Նշնուած բուն Հայաստանի մէջ շատ քիչ հայ անուններու կը պատահնեն։

նական գաւառներ, որոց մեծ մասը հայոց նման թուրքացած են, այս օր ևս յունարէն կը խօսին:

Եյս կարգէն էր Օֆ յունական քաղաքն իւր դաւառով, որ Տրապիզոնի արևելքն էրիզէի և Սիւրմենէի միջավայրը մի ծովեղբեայ վայր կը գտնուի. այս տեղ ամեն հասակի անձնաւորութիւնը յունարէն կը խօսին, արականք ուրիշ արէեան չունին (ամրողջովին մեծ ու փոքր մոլլաներ են), կը տարածուին Սև ծովու արեւելեան և հարաւային եղերի վերայ եղած երկիրներն մինչև Կարին՝ մահմետական ժողովրդեան մէջ կրօնական արարողութիւն կը կատարեն. մեծ մասամբ յունախօս են, որը թուրքերէն բառ մի անգամ չեն հասկանար, մզկիթներու մէջ յունարէն կը քարոզեն մեծաւ մասսամբ. երկու տարեկան երախայից մինչև զառամեալ ծերն մօլլա են, ամենուն զլխուն սպիտակ փատթոց կը տեսնեն:

Օֆ գաւառն արևելքն եգերացիք՝ հարաւան Համշէնցիք, արևմուտքն Սիւրմենէի աւազակ թուրքերն մնակած լինելուն՝ յոյն քահանայք չկարողացան յարաբերութիւնը հաստատուն պահէն, որպէս այլ տեղեր, որով այսօր մահմետականութեան Ճիրաններուն մէջ կը գտնուին, և ամենամեյեանդներն են. Մահմետի վերայ անլուր առասպեկլներ կը յերիւրեն.

Եյս երկու գաւառներու (Համշէն և Օֆ) կորըստեան մէկ պատճառն ևս կարելի է համարել յունական և հայկական ատելելութիւնը՝ որ մինչև օրս կը տեսէ. մինչև օրս թուրքացած յոյներն Համշէնցոց «սկատա Արմեն» խոկ հայ մահմետականք յոյն մահմետականաց «չարոխ ուտող հոռոմներ» կասեն և միմեսանց ազջիկ չեն տար և առներ:

Նոյնպէս նոյն թուրականներուն Սև Գետէ գէպի հարաւարելու մէջ կարապի կիւմիւշիանէ ալու ճանապարհի վերայ և Տէյիրմէն գէրէ ասուած անա ափերուն մօտ կը գտնուէր կոօմ ասուած, յունական գաւառակն, որ 2—3000 տուն յոյն ժողովրդէ կը բաղկանար. սորս վերայ ևս բոնացան ննիչերիք և մօլլաներն, սորս ևս մահմետական կրօնը ընդունեցին, երկու գարի չափ շարունակեցին, մինչև դարու առաջին քառորդը:

Կոօմ բարորդիմ ընդհատուած չէր այլ գաւառաց հետ, յոյն քահանաներ ծպտեալ շարունակեցին յարաբերութիւնը, քրիստոնէական հուրը վառ պահեցին կոօմի մէջ, գետնափոր եկեղեցի մի շինեցին, ուր տարին մի անգամ կրօնական արարողութիւնը, եկեղեցական խորհուրդներն կը կատարուէին, ժողովուրդն ամեն օր պարտաւորեալ էր մզկիթ գնալ աղօմէլ յայտնապէս, խոկ տարին մի անգամ իր սիրած կրօնի պաշտամունքը կատարել դաշտնի՝ գետնի տակ:

Յունական կզզեաց ապստամբութիւնից յետոյ նոօմիք այլ և այլ գետպաններու միջնորդութիւնը խնդրեցին՝ յայտնելով որ իրենք քրիստոնեաներ են:

Բայց հայ մահմետականներու բազզն այդպէս չէր. Սև Գետացոց սև բազզն գեռ սև է, գեռ «սեաւոր» սև, աւանգապահ ծերունի պառաւներու սրտից սև հառաջանքներն կտրած չէ, գեռ գուն ուրեք կը գտնուին մայրեր, որը իւրենց աղջկանց կասեն. — Մեռնիմ հէյի ատէթին, հէյի մեռնը, պատարազը, պաօր խաչը, խոռնիք, մումը, խոստովանքը ու սրբութիւնը, էմեն ինչ սուրբ է, շնու ատէթ (սովորութիւն) է թուրքի ատէթը. — Ահա ասեմ թէ ինչպէս Մահմետականութեան Ճիրաններու մէջ ընկաւ այս ցաւալի և խղճալի երկիրն:

Ենիշերիներու ի Տրապիզոն ամենազդեցիկ ժաման կն էր 1700 թուրականը, որը Պոլսից ի Տրապիզոն գաց թուրքացած, իրենց թուրոյն վերայ ևս բարդուած էին տեղացի աւազակք ու ենիշերեաց կարգն անցած և սոքա ևս սփռուած էին մինչև Կարին, Մուշ, Վաղէշ, Տիգրանակերու, Խարբերդ ևլն.:

Ենիշերիներու մեծ ոյժ տուած էր Սիւրմէնեցի աւազակարարց ժողովուրդն, որը մեծ և փոքր աւազակ են, այս օր խոկ, մի փոքր մասն միայն նաւագարութեամբ կը պարապին, ենիշերիք աւելի նոցաազգեցութեամբ ի Սև Գետ գործած են, երկիր գիրքն ևս իրենց օդնած է Վան գաւառ լեռներով ու անտառներով շրջապատուած է պարսպի նման, հինաւուրց անտառներն անմիտելի դարձած են, որպէս Ենիշերիք ուռկանի մէջ ամիտոփուած ձիներու նման ինչ օր ուղած են այս տեղ անել՝ յաջողած են:

Եյսպէս էր Սև Գետ և Համշէն, որք կղզիացած էին այդ երկու հօփաններու մէջ. Պարփար լեռներու շղթայն բնդհատած էր Կարնից և Բարերդից, արևելեան կողմն Նեգերացիք, հիւսիսապին և արևմըտեան կողմից յունական ատելութեան մատնուած. առաջնորդներից, նոյն խոկ կաթուրդիկոսներից մոռացուած, քահանայից զրկուած, ալէկոնծեալ. Յնչ գիրի համար հազիւ մի քահանայ կար: ։

Թորոսլի գիւղն Սև Գետի ամենէն բարձրն և մեծն է. այս գիւղը կայր տէր Կարապետ անուն քահանայ մի, որ նոյն ժամանակ մեծ հոչակ հանած էր, և ժողովրդից իրեք սուրբ անձնաւորութիւն մի կը պաշտուէր, ամբողջ Սև Գետի ժողովուրդն նորա անունով կերգուէին:

Սիւրմէնէ գաւառին մէջ անուանի եղած էր նաև Դուռութ օղի մօլլա Մէհմէտ. սա այնչափ մոլեռանդ մէկն էր, որ կուզէր մի ակնմարթի մէջ զքրիստոնեայս մահմետական կրօնին դարձնել:

Քանի անգամ մուաւ Համշէն և Սև Գետ, Ենիշերիներու խմրով կամեցաւ իւր նպատակը առաջ տանել, չը յաջողուեցաւ, թէկ գտաւ իւր քարոզին լսող, խոկ ոչ մահմետականութիւնը ընդունող այլ և այլ երկիրներէ ընտրեց քառասուն մոլեռանդ աշակերտներ, միջոց մի ուսոյց, մոլեռանդութեան թերին սոցա մէջ լրացցյ, զորս մօլլա կարգեց, երդում առաւ նրանցից, որ ցմահ մահմետականութիւնը արածելու համար պիտի մարասին:

Եյս մօլաներն կրկին հոգուվ և մեծ եռանգեամբ խորհուրդ արին մոլեռանդ թուրքերու և Ենիշերիներու հետ, մուան Սև Գետ, մի ծայրից միւսը քարոզեցին մահմետականութիւնը, սպառնացան և եթէ չընդունէիք, թագաւորից մեծ բանակ կգայ, զամենդ կը կոտորէ, ձեր որդիքը և աղջկունքը ձեղնից կը բաժանեն...» ելն. սպառնալեօք:

Մոլաներն տակաւ առ տակաւ սերմաննելու վայրեր գտան, ոմանք առ երես, ոմանք հայերից առ ահի կը խոստովանէին թէ Մահմէտ Ճշմարիտ մարգարէ է, և թէ Դուռանը սուրբ է:

Հայերէն ոմանք ժամանակի պահանջման և քաղաքականութեան հետևած էին, Զերմեննադ մօլ-

¹ Համշէն որ մօտ 40000 տուն, Սև Գետ 5—6000 տուն է. Մուաստարէս այս 16,000 տուն հայերն ։ ։ ։ քահանաներ ունէին:

² Սիւրմէնէի ժողովրդեան վերայ կը տեսնուի բարակ երկար դէմք, կապոյտ պիւրաչար աշքիր, արազաշարժ մարմն՝ որք կործն Պոնտոսի թագաւորութեան բարձման միջոցին թուրքացած են, որով իրենց վերացած աշակերտներուն պարագան:

լաներն իրենց սերմանած սերմը արդիւնաւորած կարծելով՝ հաշիւ կը տային գուրար զանուած մահմետականերուն, թէ իւրաքանչիւր գիւղէ ո՞րշափ անձնարութիւններ լսած և ընդունած են Մահմետի կրօնը:

Մատ տամն տարի քարոզեցին մօլլաներն Աև Գետացոց, վերջ ի վերջո պաշտօնապէս առաջարկեցին որ ընդունին Մահմետի կրօնը:

Հայ ժողովութքն բուռն կերպով զիմադրեց մօլլաներու առաջարկութեան և արտաքսեց նրանց Աև Գետից:

Մօլլաներն միրաւորուած նախ հնարադիտութեան և ապա բուռնութեան զիմելու խորհուրդն Արշացան, ժողովեցին 500-ի շափ մոլեւանդ թուրքեր, որոց աւետեցին թէ Աև Գետացիք պաշտօնապէս մահմետական կրօնը ընդունելու են, և թէ այս այն ինչ մարդով մեղ լուր յդած են և պաշտօնապէս թէ փատութեան արարողութիւնը իրենց վերաբ կատարել կը խնդրեն, և թէ ամեն ջերմեւանդ մահմետականի պարտականութիւնն է այսպիսի մեծ հանդիսի մի ներկայ լինելու:

Եյս 500-ը տարածուեցան երկրի պատ և այլ կողմերն քարոզեցին և հոչակեցին մօլլաներու աւետին, հազար ձիաւոր, մի այնշափ ևս ոսով գիմեցին Աև գետ նաև մի մեծ ննիչերեաց խումբ ևս հետերնին, որպէս զի չզրկութն այն մեծ հանդիսէն:

Եյս ամրոխը մեծ հանդիսով և աղմուկով մրտաւ Աև գետ. Պուրութ օղի Վէհմէս առաջ անցած ձին կը քչէր վեց հոդի նորա չորս կողմ պատած, պատկառելի կերպով կը ծառապէին նման նորա քառասուն աշակերտներն դրօշակ պարզած երգելով կը հետեւէին իրենց քարժապետին, ննիչերիը ևս փալլուն և մեծամեծ տապարներ իրենց ուսին դրած, մօլյաներու շուրջը պատած կը հետեւէին ամրոխին. Մահմետականներից ամենէն ջերմեւանդը ամրոխը ճեղքելով կաճապարէր առաջ սողալ, կրօնականներու մօս գտնուիլ.

Մօլլաներու երգը, ենիշերիներու «Հա, Հուն», մօլեւանդ ամրոխի խառնավնդոր աղաղակն՝ մեծ սարսափ աղդեցին և զարմանք Հայ գիւղացոց, յիշեցին որ տուլթանը զօրք յդած է զիրենք կոտորելու, որպէս առաջ սպառնալեաք լսած էին:

Մօլլաներն իրենց խմբով իջան մի հայ գիւղ. առաջարկեցին որ մահմետականութիւնը ընդունողներն թող ներկայանան իրենց առաջնորդին:

Հայ, ք միակամ գիմադրեցին յայտնելով, որ այս երկրի մէջ թրբացող չկայ, ինչ ևս սպառնալիք լինի, միակամ գիմադրելու են:

Մօլլաներն ատեան բերել տուին այն հայերն, որը միւսուլմանութեան մերձեցած կը համորուէին, որոնցից հարց ու փորձ արին, իրենց համոզումը ուզեցին գիտնալ:

«Նորա պատասխանեցին.

— «Մեզնից վեր կայ Թօրոսլի գիւղ, ուր կը նստի Տէր Կարապետ քահանայն, ժողովրդեան մեծ մասն նորա համոզուած է, չեն դառնար մահմետականութեան. մենք ևս դառնալու լինենք, Հայ ժողովրդից անհնարին հարուած կը կրենք.»

Թուրք ամրոխը նյոն հանդէսով մեկնեցաւ, քանի գիւղեր պատաշելով մտար Թօրոսլի մեծ հայ գիւղն, ուր էր պաշտելի Տէր Կարապետ:

Տէր Կարապետ զարմացաւ, երբ զայս տեսաւ. հարիւրի չափ զինեալ Հայեր յդեց անմիջապէս, որք գիւղի եղբն սպառնացան թուրք ամրոխին

որպէս զի գիւղը ըլ մտնեն, շուտով հեռանան. ապա թէ ոչ ասացին, ցմահ կունելու են:

Մոլեւանդ ամրոխի վերայ մեծ ներգործութիւն արաւ հայերու սպառնայիքը, թէ կատաղած կուղէին մի զայրկենի մէջ կլել ու կորսնցնել, սակայն գտանդաւոր գիրքի մէջ կ' գտնուեին, հայ բնակիչներով յրջապատուած էին:

Խոհեմութեամբ յետ քաշուեցան, տարածուեցան մոլեւանդ թուրքերու մէջ, յայտնեցին որ հայեր ապստամք են, դիմամի զմեղ հրամիրած են թիտառուելու, որպէս զի զմեղ ներս առնեն, ապա կոտորեն, հազիւ կարողացած ենք որոց նպատակին հասու լինի, փախչիզ:

Իյո և սորա նման խօսքեր տարածեցին թուրք հասարակութեան մէջ, մոլեւանդ մի մեծ ամրոխ ևս գրգռեցին հայերու գէմ:

Բերնէ թերան տարածուեցաւ. Պուրութ օդին մօլլաներն և պատուաւոր մահմետականներ աշնարհուած են, ուրեմն մահմետական կրօնը և Մահմետ անարգուած է:

Այլ և այլ տեղերէ զիտնական մօլլաներ, զագի, մուֆթի և անձննը հաւաքուեցան ի Սիւրմենէ, Պուրանը և նորա բացատրութիւնը մէջ տեղ գրին, ամենը պատկառանօր համրուեցին, որոշեցին թէ դուրանի հրամանն է, քրիստոնէից լաւ խնամ տանել, բայց երբ մէկն գիմէ մահմետականութեան և ետ դառնայ, նորա պատիմը մահ է, նա պէտք է մաս առ մաս յօշոտուի, զի մարգարէն խափան է. իսկ Աև Գետացիք ոչ միայն Ասաւուծոյ մարգարէն խափան են, այլ և ապստամք են, ուստի ոչ թէ հասակաւոր մարգերն մահուամբ պատժել՝ այլ ծնկեր երեխայն մինչև անդամ ի սուր մաշել, որպէս զի պատ անհաւատներու սերունդը այս աշխարհէն բարձուի:

Մօլլաներու որոշումը հաղորդուեցաւ Տրապիզոնի կառապրութեան և թուրք հասարակութեան, մոլեւանդներու թիւր քառ պատկեցաւ, կառապրութիւնն ևս իւր ուժը միացոյց այս ամրոխին, մեծ ուժով մտան Աև Գետ առաջ միանդամ մտան թուրուլի և գիւղը պաշարեցին, յանկարծակի:

Աւագ յարրած օրն էր, ժողովուրդն հաւաքուած էր եկեղեցին կրօնական պաշտամանց ներկայ լինելու. տեսան շրջապատուած ամրոխն, որ կառաջարկէին և կրսպաննային մահմետականութիւնը ընդունելու. Հայ ժողովուրդն ուարած Տէր Կարապետի երեսն կը նայէին, մօլլաներէն մին թրով մի հարու իցեցոյց քահանայի գլխին, նա ձեռն գէմ տալով կորուեցան րաղուեներն. երկրորդ և երրորդ հարուածին արիւնը սկսաւ ֆշայ և գետին տապարեցաւ, որ անմիջապէս միւս մօլլաներն յօշոտեցին մաս առ մաս նորա մարմինը, որպէս զի երկիւղ աղդեն ամրող Հայ ժողովրդեան վերայ,

Ժողովրդեան մեծ մասը դիմադրեց թուրք ամրոխին, մերժեց նորա առաջարկութիւնը և մերժողի գիակը ընկա. բարի քահանայի մասունքներու վերայ. կոտորածը ամեն կողմ սկսաւ, ծեր և մանկունք սուրերու հարուածներու տակ կը թաւալէին արեան մէջ:

Կոտորածը սարսափելի եղաւ. մոնշիւն ու հեծեկլու ամրուած տիպուր արձագանք տուին Աև Գետացոց սկզբին, Աև Գետի սկզբին զի հայ հաւառական տակաւած արիւնը, ժողովրդեան երկշուս մասն խոնարհեցաւ մոլեւանդ զաղանաց առջև. խոստացած կունել ու կոտորածը ամրուած տակ կը թաւալէին

դադարեցնել, որպէս զի հետեւալ օրն որոշում մի տան և թլիքատուին:

Հետեւալ օրն որոշումը հաղորդուեցաւ Պուրովի օլլի Մէջմէտին, թէ Սուրբ Յարութեան օրը կը պատրաստուին թլիքատուելու:

Կոտորածը գագարեցաւ, կրօնասէր մարդիկ ժողովնեցին իրենց որդիքը, տանը մէջ դտնուած թեթև իրեղենները մտան Սև Գետի շուրջն պատած և անտառներու մէջ, ոմանք և գաղանաց ձիքաններուն զոհ գացին. մնացողներն մտուեցան անտառները, յարեւուսու կյոսուղղութիւն մի բանելով, անցան խիստ ու փշալից անտառներու միջէն, ուր ոչ թէ մարդու ուր այլ գաղանաց անդամ ուրբ կոփած չէր.

Եյս փախստականներու մէջ կային ջերմեռանդ մարդիկ, որը ինսամով հաւաքած և ամփոփած էին Տէր Կարապետի յօշոտուած մարմնը, իրու անգին մի բան շալակած՝ կը հետեւէին փախստականաց:

Փախստականներու վիճակն սարսափելի էր, անտառներն գեռ արձագանք կտան. ոմանք հառաշանօք կը ձայնէին իրենց ամենասիրելի սրտի հատորիներն, ոմանք կը մրմնջէին կոտորուած աղդականներն, ոմանք նօմի ծարաւ կը հեւային, երախաններու վժոցի ձայնն անդամ սարսափ աղդամ էր հազարաւոր տարի մարդու ձայն շլող անսանց և գաղանաց:

Եթէ դուք այս անտառները տեսած լինէիք՝ պիտի երևակայէիք, որ սորա մէջէն անցնողներից մէկն ևս չպիտի աղատուէր, իսկ ևս կամեմ որ լուը Բարերգի կողմն դուրս ելաւ, ոչ լու Տրապիզոնի մերձականներն Զաղբու, Ապիոն, Կալաֆայ ելն. վայրեր գուրս ելան, դուրս ելնողներու լու ևս անցն ձանիկ, որ Տրապիզոնից ծովով մի աւուր ձանապարհ է ի յարեւմուտու:

Տէր Կարապետի սերունդից աղատուողներն հասն Կալաֆայ գիւղն, ուր ևս հաստատուեցան, որ տեղ ևս ամփոփնեցին ի հոգ նորա յօշոտուած մարմնոյ մէկ մասն, միւս մասն ևս Բարերգի կողմն գընացողներն իրենց հետ տարած էին:

Խոհ այն կողմ Կարա գէրեի մէջ ժուրը ամբոխը՝ ինչ որ արած էր Թորոսին, նյոնք ևս արեց հարիւրի չափ գիւղօրէից, փախչողն արդէն փախաւ, մէկ մասը կոտորուեցաւ, մէկ մասն ևս առ երես ուրացաւ, որպէս զի վասնըն դռնից հեռացնէ:

Բուն զատկի օրն էր ամրող երկրի երեւլիններից 500-ի չափ անձնիք հաւաքուեցան Թորոսի գիւղի եկեղեցւոյն մօտ գտնուած հսկայ աժրի ծառներու ներքեւ և թլիքատուեցան:

Մի շաբաթ յետոյ այս աժրի ծառերի շուրջն 30 ձեռք զալուկ գուռնա կածուէր, նախին թլիքատուալներու աղդականներն էին նորա, որը հանդիսաւոր կերպով կը թլիքատուէին և որոց թիւը հազարի կը հաննէր:

Նահատակուած տէր Կարապետի որդին Կալաֆայ գիւղի մէջ քահանայ ձեռնազրուեցաւ իւր հօր անունով:

Սա ուխտեց, որ միշտ իրենց սերունդից քահանայ ձեռնազրուին տէր Կարապետ անունով և դունէ տարին մի անգամ ծաղտեալ այցելեն ի Սև Գետ, ժաղովուրդն հոգեպէս միմիթարեն:

Եյդ ուխտու պահուեցաւ մինչև 1820 թուականներն, որ միշտ այդ անից եղող տէր Կարապետը կը գնար Սև Գետ, միւսուն կը բաժանէր, կարգ կը

կատարէր, ծաղտեալ անէ տուն կը մտնէր, կը խրատէր ևլին:

1820 թուականներուն՝ չգիտեմ ինչու այդ տնից քահանայութիւնը գագարած էր՝ Սև Գետացիք քանական տարւոյ չափ բոլորովին քահանայի երես շտեսան այնուշետեւ:

1840 թուականներուն մի այլ լնտանիբէ (Տաւալաշեան) մէկը քահանայ ձեռնազրուեցաւ տէր Կարապետ անունով, սա բարեկամացաւ Համշէնի բէկերու հետ, արտօնութիւն առաւ մեծ բէկից, որ տարին մի կամ երկու անգամ Համշէն գնայ, նցյու տեղ դեռ յայտնի գանուած 25—30 տան չափ հայերուն կրօնական արարողութիւնը կատարէ:

Այդ բէկը վեհանձն մէկն էր այդտեղ մը նացած հայոց ինամ կը տանէր երբեմն տէր Կարապետին մի կը յդեր, որ գայ կրօնական արարողութիւնը կատարէ. — թուբրութիւնը ինչ մը չէ, կասէր նա—ինց ըննենք էօր թուբրացած ինք, ընկած ինք ևս տուծու դու կրակին մէջ:

Հայերու պատճառաւ մտաւ տէր Կարապետ Համշէն, գտաւ այնտեղ թուբրացած հայերու մէջ գեռ քրիստոնէական հոգի, պատաւ կանանց բաժանեց միւսուն, որ տանելով իրենց երախայոց քսեն:

Այ յիշեմ 60—63 թուականներուն կային գեռ ևս ջերմեռանդ կիներ, որ իրենց երախայներն Տրապիզոն բերած կամ յղած յանձնած են իրենց մարդէն գաղտնի մի հայու և առարկած, թէ ջուրն ընկած կամ գայն յափշտակած է:

Որոնողն ցարդ ևս ջերմեռանդ պառաւներ կը գտնէ սա մասցրողներէն:

Եյս տէր Կարապետ նաև շատ անդամ այցելած է ծագեալ ի Սև Գետ, միւսուն բաժանած:

Ներկայ անցքերու մի մասը լսած եմ այս տէր Կարապետից, որ գեռ կենդանի է ի Տրապիզոն և շարունակ աշխատած է Փիրփանէ ելն. քանի տեղեր ուսումնարան բանալ գարձեալ քրիստոնէական հուրը վառել Սև Գետացց մէջ. այս առթիւ քանի անգամ Պօլիս գիման գտած է մէկ երկու կրօնասէր ամիրաներ, որը մասնաւոր օգնած են գաղգրքեր շնորհելով Սև ևս զօրաւոր օգնութիւն մի չգտնելով գործելէ գագրեցաւ, ծերութիւնը ևս միերայ հասաւ. նաև ապօրինի պսակ մի կատարելունի Պօլիս հիւանդանոց տարուեցաւ, յորմէ յետոյ յուշատ, աստանդական սկսաւ շընէլ. ոմանք ևս կը բարիսաւէն թէ Սև գետացց համար օգնութիւն կը հաւաքէ որնիքը ուտէ. ևլու:

1840—45 թուականէն ի վեր Սև Գետացց հետ յարաբերութիւնը գագրեցաւ, այն հայերն, որ Տրապիզոնի հայերու քենոի, հօրեղայր և հօրեղբրոր որդին կանուանէին, որպէս ամենամերձ աղդականի կը վարուէին, այս որ տակաւ առ տակաւ սառուելու վերայ են, վասն զի օսմանցիք ուսումնարան բացին, կրօնամոլ Օֆցի մօլլաները սկսան բուռն կերպով գործել, շինծու առասպելներ յերիւրել, այնպէս որ հայ ժողովրդին ի մահմետականութիւն գարն հրաշքներու կարգն զատուած է:

Զոր օրինակ հարցուցի մի Սև Գետացու՝ ինչ էր պատճառն որ ձեր նախնիք մահմետական գարձան:

Պատախանեց անմիջապէս.

— Մահմէտ լուսեղէն ամպի վերայ նստած ձայն տուաւ հայերու. «Ելէք, որ ձեր փրկութեան համար եկած եմ տեսներ և հաւատացէք որ չկորնչիք. մեր նախնիք ինդրեցին մի հրաշք, նա ևս առ

սաց թէ Սև Գետ թող լինի ձեզ հրաշք այնուհետ Սև Գետ եօթն օր արիւն գարձաւ մեր նախնիք այս հրաշքը որ տեսան ընդունեցին ճշմարտ մարդարեին։

Այս Սև Գետ արիւն գարձաւ այդ ևս կը վրկային այս օր այն հայ քրիստոնեայ մնացած հայրն է եօթն օր եօթն զիշեր արիւն կը հոսէր դառիշ բան չէր այլ իմէ իրենց սիրելի ազգակիցներու արիւնը որ կասաղի բարրարասութիւնը կը հեղուր որ հոսելով խառնուեցաւ Սև Գետի ալիքներուն Սև Գետ կիսով չափ և արիւնով թանձրացած մեծ և փոքր հայոց դիակներն կասեն ջրի ընթացքը կասեցացած էին։

Մինչև 1850 թուականներուն Սև Գետացոց մէջ մի ուժեղ աշխատավոր լինէր շահուած էին որպէս այժմ կը պատմէ ծերունի ծալաշեան տէր Կարպետ։

Ի՞ւր ափոսու որ մեր անհեռատեսութեամբ և անտարբերութեամբ կորուսինք բաղմաթիւ ժողովուրդի կորսուելու վերայ են նաև նոցա մէջ գտնուած օգտակար աւանդութիւններն և դեռ այդ մեծ կորսով չենք զգաստացած և ժերենս չպիտի այլ զգաստանամք։

Գտնուած եմ Թորոսի գիւղն ։ կարծած եմ թէ հայ գիւղի մի մէջ կը գտնուիմ մեծին ու փոքրին խօսքը հայերէն արանց և կանանց կերպարանքը հայու տիպ և Տրապիզոնի հայ գիւղացոց զգեստի նման։

Հարցուցի մի ծերունու

— Ինչո՞ւ թուբբացած էք։

Սա ջերմ մահմետական էր խոժոր գէմբով մի առմի պատմել սկսաւ Մահմետի հրաշագործութիւններն ։ Մի պառաւ կնօղ ուղղեցի այս հարցում մի գաղտնի վայր։

— «Յիսուս Քրիստոս անելով սկսաւ ասել՝ մեռնիմ հայի հաւատին էն է եօր ինչանք հիմ կապրինք ։»

Ծիմէակովացի մի ծերունի պատմեց թէ իրենք քահանայի սերունդ են «Քեշի ողի» կասուին այժմ ևս իրենց տան մէջ եկեղեցական ամեն զգեստներ կան ։ շատ մի ճանապարհորդ հայ և եւրոպացի ուղած են գնել բայց չէ ծախտած որպէս զի իրենց տան անրազդութիւն չպատահի։

Դոյն գիւղից մի կնօղ հարցուցի ։ գու թուբբես ինչո՞ւ մի ոսկի տուիր եկեղեցւոյ համար աւետարան գնելու։

— Հէյ կիտի հէյ ասաց հին երեցնին ինցո պէտքը երեց էին խալվութ (գաղտնի) մեզիկի մեռուն ընթիւն կու միք էլ միր տղոց քսէնիք կու իմ չիւյս մօնչերուս երկուսին քսած ունիմ էնոնք օնուշ հօմին կու էնուր էօր քսած չունիմ շոն հոս կուգայ։

Թրէնոր գիւղացի մի կը պատմեր թէ «Ելվէն գիւղի եղած է աշխ Արգան որ հայերէն տարեր յօրինած է մինչև հիմայ հարսանիքներու մէջ կը երգուին» ։ նաև կասէր այս Թրէնորցին թէ Օձիուլ գիւղի եկեղեցւոյն մէջ մուր է մի օձ և քար գարձած է երբ քահանայն աւետարանը օձի զլսուն դրած է։

— Պուք ինչ գիտէք թէ հայ էք հարցուցի մի պառաւի։

1. 1867-8 թուականներուն ի Մուշ զնալու մէջոցին այս գիտէն անցայ:

— Մեռնիմ քեզիկի ասաց ինցո չէ Կիրակուուտ չորեքմուտ ուրբթմուտ պէհինք կու խաչին (եկեղեցի) ըխտինք կու մում վառինք կու ծաղիկ հոնինք կու սեր հաւքի խառնիլ չինք էլ ինչ ասիմ հէյի էմեն ատէթ պէհինք կու։

Թրէնոր գիւղն որ այժմ Ծիմէա կասուի այստեղ հայ լեզուն աւելի գործածութեան մէջ է։

Ես գիւղացիներից մին կը պատմէր թէ 250—280 տարի առաջ իրենց գիւղը եղած է կաղ Խաչոյ որ շատ հարուստ և կալուածատէր եղած է ունեցած է հայերէն գրուած Թ.Վ.ՓՈՒ (կարուած իրացնող գրութիւն)։ սա վէճ ունեցած է Պուռանացի թուրբերու հետ Պօլիս գացած ունեցած հայերէն գրութիւններով դատը վասակած է ։ Պօլսից գարձած է Թրէնոր մէկ եկեղեցի և մէկ մզկիթ շնուր տուած է իր ծախտով։

Որպէս կը պատմն՝ եկեղեցին 1850-ին մարագ գարձած էր սակայն նորա հսկայ շնուրթիւնը մարդու վերայ մնած տպաւորութիւն կը թողու։

Մզենանդն համբ Մահմատաւ որպէս այլուր այս տեղ ևս եկեղեցին քանդել տուաւ։

Վերոյիշեալ Թրէնորցին կը պատմէր թէ իրենց գիւղը հայերէն խաղեր ասող պառաներ կան և մէկ տաս օր իրար վերայ ասեն չմիրջանար (փարբիկ մաս մի զրի առած եմ)։

Նաև կասէր մէկ մեղուներու մերուոր + առաջ իրենց երկին էր յետոյ անցած է Համշէն։ Մերուն այնչափ շատ էր որ արևին լցուր կը խափանէր ։ Ի Սև Գետ մի քարայր կայ ուստի միայն տարին ութ ջորու բեռ մեղը կը հանեն ։ Դաձնեալ պատմոց թէ շամպիք որբ հայէ գարձած են ։ Կոշանցիք որ յոյնէ գարձած թուբբեր են ։ իրար աղջիկ չեն տար և առնէր ։

Կը շուշուշու։

Ս. Հայկունի.



ԲԱՆԱԿԱՆԱԿԱՆ-ՄԱԿԱՎԱՐԺԱԿԱՆ

Ա. Ա. Ա. Ա. Ա. Մակավարժական

4. Փ. Բ. Բ Ն Ն Ն Է.

Գերմանական մանկավարժների հայրերից մէկն է Բենեկէն որի ծննդեան հարիւրամեակը կը լրանայ երկը տարուց Յենեկէն մի Յեննիցի իրաւաբանի որպի էր ։ նա ծնուել է 1798 թուին։ Ցղայութեան հասակում աչքի էր ընկնում իւր առանձին ընդունակութիւններով ։ տասն և հինգ տարեկան հասակում նա զիմնազինն աւարտեց և անմիջապէս իրրե ազատակամ զինուոր զրուեցաւ պատութեամբ (Freiheitskriege, Ասպօ-

1. Այսպէս կը հաւատան թէ աշխարհիս ամբողջ մառներու մի մայր կայ ։ նա եւս Համշէն է ուստի մեղուներն կը ցորեն կը տարածուին աշխարհիս այլ եւ այլ կողմերը։